ԳԱՌՆԻԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Վերջին խորեզմշահ Ջալալ ադ-Դինի (1220—1231) արշավանքներն Անդրկովկաս՝ մոնղոլական արհավիրքներին անմիջապես նախորդող ամենակարևոր իրադարձություններն են XIII դ. երկրորդ տասնամյակի Հայաստանի և Վրաստանի պատմության մեջ։ Խորեզմյան զորաբանակի յոթնամյա ռազմական գործողությունները տնտեսական, քաղաքական և ռազմական տեսակետներից զգալիորեն թուլացրին Անդրկովկասը, որոշ չափով ազդեցին նաև սոցիալական պրոցեսների ընթացքի վրա ու ծանր հետևանքներ ունեցան անդրկովկասյան ժողովուրդների համար։

Հայաստանում և Վրաստանում Ջալալ ադ-Դինի հետագա ձեռնարկումների համար բախտորոշ նշանակություն ունեցավ Գառնիի ճակատամարտը՝ մեծ չափով պայմանավորելով խորեզմշահի ապագա հաջողությունները։ Չնայած Ջալալ ադ-Դինի արշավանքների պատմությանը հատկացված ուշադրությանը, այդ կարևորագույն իրադարձությունն առայժմ չի արժանացել հատուկ քննության։ Մասնագիտական գրականության մեջ այսօր էլ տարբեր, երբեմն հակասական տեսակետներ են հայտնվում ճակատամարտի ճշգրիտ ժամանակի, ընթացքի, մասնակից կողմերի ուժերի հարաբերության, հայ-վրացական բանակի պարտության պատճառների, հետևանքների և այլ հարցերի վերաբերյալ, ուստի այդ խնդիրների վերստին արծարծումը կարևոր է։

Մոնղոլների կողմից իր հայրենիքից հալածված խորեզմշահը Հայաստան ներխուժեց 1225 թ., Ատրպատականից[1], «գերելու և ավերելու Դվինն ու շրջակա երկրները»[2]։ Նորահայտ թշնամու դեմ ճակատամարտելու համար Ռուսուդան թագուհին (1223—1245) ուղարկեց աթաբեկ և ամիրսպասալար Իվանե Զաքարյանին, որը, «ժողովեալ... զամենայն զոյժ և զօրութիւն Հայոց և Վրաց»[3], վճռական մարտի ելավ Կոտայք գավառում, Գառնի գյուղաքաղաքի մոտ։ Հայ-վրացական բանակի հաղթանակը կնշանակեր պարտության մատնել և արտաքսել թշնամուն, իսկ Ջալալ ադ-Դինի հաջողությունը նրան թույլ կտար շարժվել ուղղակի Թբիլիսիի վրա։

Սկզբնաղբյուրները բավական տվյալներ են ընձեռում՝ պարզելու հակառակորդ զորաբանակների թվաքանակը։ Ըստ Իբն ալ-Ասիրի, հայ-վրացական

---

1 «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 143, «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 399։

2 «Վրաց ժամանակագրություն», թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները Պ. Մուրադյանի, Երևան, 1971, էջ 59։

3 Ստեփաննոս Օրբելյան, էջ 399։